

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը վերանվանվել է և այսուհետ կոչվելու է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

Բաց հասարակության հիմնադրամները, ակտիվորեն գործելով աշխարհի ավելի քան 70 երկրներում, օժանդակում են արդարադատության ու մարդու իրավունքների, խոսքի ազատության, հանրային առողջապահության և կրթության հասանելիության հարցերում:

Այս համարում՝

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

- Հաշմանդամների հարցերով ՀԿ-ները մասնակցում են աշխատաժողովի Լեհաստանում
- Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը ֆինանսավորում է մարդու իրավունքներով զբաղվող մարզային նոր կազմակերպությունների
- ԲՀՀ-Հայաստանը մեկնարկում է հանրային քաղաքականության հետազոտությունների դրամաշնորհների նախաձեռնություն
- ԲՀՀ-Հայաստանն աջակցում է ամառային ճամբարին՝ ազգային հանդուրժողականություն և երկխոսություն խթանելու նպատակով
- Բաց հասարակության հիմնադրամներ - Ռուսիայի ավելի սերտ կապեր է ցանկանում ձևավորել Հայաստանի և Ռուսիայի քաղաքացիական հասարակությունների միջև

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

- «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն ներկայացնում է «2009-2010թթ. Գյումրիում սոցիալական բնակարային մոնիտորինգի զեկույցը»

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

- Ա1+-ը սկսում է առցանց հեռարձակում
- ԲՀՀ-Հայաստանն աջակցում է հինգ առցանց լրատվամիջոցների

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Ներկայացվել է «Մարդու իրավունքները և պացիենտի բուժօգնությունը Հայաստանում. գործնական ուղեցույց»-ը
- Պացիենտների իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթաց՝ մարդու իրավունքների հարցերով զբաղվող իրավաբանների համար

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Ռազմավարական դատավարության ծրագիրն օժանդակում է ինը գործի հարցում

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Ներկայացված է երեխաների պաշտպանության իրավիճակի վերլուծությունը երեք մարզերում
- «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում» մեթոդական ուղեցույցը ներկայացնում է «Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը
- Հայ գիտնականները հետազոտություն են անցկացնում Քեմբրիջում

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

- Թումանյանի հեքիաթի օրը Դսեղ էր բերել 200 երեխա
- «Սև կյանք» լուսանկարների ցուցահանդես Երևանում

ՀԱԿԱՆԳՆԱԺԱՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

- Ամառային չորս ճամբար՝ կարիքավոր երեխաների համար հոգատար միջավայր ապահովելու նպատակով
- Աջակցություն «Աշտարակ» ֆերմերային խմբին՝ փրկելու նորարարական գյուղատնտեսությունը
- Հակաճգնաժամային հիմնադրամի շնորհիվ «Խամաք» ՀԿ-ն կարողանում է ապահովել ցերեկային կենտրոնի գործունեությունը՝ հոգեբուժական խնդիրներ ունեցող անձանց համար

ՀԱՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Մեծ ցավով տեղեկացնում ենք Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի Տնօրենների խորհրդի նախագահ և «Թրամափարենսի ինքնուրույն» հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի հիմնադիր Ամալյա Կոստանյանի մահվան մասին: Ամալյան մահացել է 2010թ. սեպտեմբերի 30-ին Երևանի հիվանդանոցներից մեկում: Նա ԲՀՀ-Հայաստանի խորհրդի նախագահն էր 2008թ.-ից, իսկ մինչ այդ նա երկու տարի խորհրդի անդամ էր:

Մենք կորցրեցինք ոչ միայն հիանալի լիդերի ու նվիրյալի, մարդու իրավունքների խիզախ ու անկեղծ պաշտպանի, այլ նաև հույսակալ ընկերոջ, ում բոլորը սիրում էին: Մենք կորցրեցինք մեր լավագույն հայրենակիցներից մեկին: Մենք խորապես սգում ենք Ամալյայի անժամանակ մահը և մեր ցավակցանքն ենք հայտնում նրա հարազատներին, բարեկամներին և գործընկերներին: Մենք դեռ երկար կհիշենք Ամալյային՝ իր անցկուն ոգով, ինտելեկտով, հումորով ու խանդավառությամբ, ով ամենադժվարին պահերին ոգեշնչում էր մեզ ու օգնում իր խորհուրդներով:

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի անձնակազմ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հաշմանդամների հարցերով զբաղվող ՀԿ-ները մասնակցում են աշխատաժողովի Լեհաստանում

Հայաստանում հաշմանդամների հարցերով զբաղվող տարբեր ՀԿ-ներ ներկայացնող անձանց 10 հոգանոց խումբը սեպտեմբերի 17-21-ը մասնակցեց Լեհաստանում անցկացված աշխատաժողովին: Ծրագիրը ֆինանսավորվում էր «Արևելք-արևելք. սահմաններից այն կողմ» ծրագրի շրջանակում: Սա եռափուլ ծրագիր է Հայաստանի,



Այց Լեհաստանի վերականգնողական և կրթական կենտրոններ

Վրաստանի և Լեհաստանի միջև: Լեհաստանում կազմակերպված աշխատաժողովը նպատակ ուներ խթանել տնային խնամքի ցուցաբերումը հաշմանդամներին: Երկրորդ փուլը, որ կկայանա նոյեմբերին Երևանում, նպատակ ունի խթանել

վերականգնողական և քերականակ կենտրոնի գործունեությունը հաշմանդամների համար, իսկ երրորդ փուլը, որ կանցկացվի Վրաստանում, ուղղված կլինի հաշմանդամների հետ իրականացվող կամավորական աշխատանքներին:

Ծրագրի հիմնական նպատակն է իրականացնել փորձի փոխանակում կույր և տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց վերականգնողական ծառայությունների ու խնամքի տրամադրման ասպարեզում: Ծրագրի արդյունքում հայ մասնակիցներն ակնկալում են ձեռք բերել բավարար գիտելիքներ ու հմտություններ՝ կույր և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար վերականգնողական ու խնամքի կենտրոն ստեղծելու համար: ■

**Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը ֆինանսավորում է մարդու իրավունքներով զբաղվող մարզային նոր կազմակերպությունների**

2010 սեպտեմբերին մրցութային հիմունքներով ընտրվեցին մարդու իրավունքներով զբաղվող ինը հասարակական կազմակերպություններ, որոնցից 4-ը՝ մարզերից: Երևանում և մարզերում մարդու իրավունքների նոր կազմակերպություններին բացահայտելու համար 2010թ. հունիսին ԲՀՀ-ը հայտարարեց մարդու իրավունքների կազմակերպությունների մրցույթ՝ նպատակ ունենալով բացահայտել այս դաշտի նոր դերակատարներին ու նպաստել դրանց մասնագիտական աճին:

Ընտրված ՀԿ-ները, մինչև 10000 ԱՄՆ դոլար կազմող փոքր բյուջեով կիրականացնեն նախագծեր տարբեր ոլորտներում՝ զբաղվելով բնապահպանական խնդիրներից մինչև անչափահաս իրավախախտների հետ կապված հարցերով: ■

**ԲՀՀ-Հայաստանը մեկնարկում է հանրային քաղաքականության հետազոտությունների դրամաշնորհների նախաձեռնություն**

2010թ. սեպտեմբերին Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը մեկնարկեց հանրային քաղաքականության հետազոտությունների դրամաշնորհների նախաձեռնություն, որը հնարավորություն կտա հանրային քաղաքականության հարցերով զբաղվողներին իրականացնել հետազոտական նախագծեր, որոնք կընդլայնեն երկրում առկա ամենահրատապ խնդիրների շուրջ բանավեճը:

Հետազոտական դրամաշնորհները նախատեսված են քաղաքացիական հասարակության, բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, քաղաքական վերլուծաբանների և խորհրդատուների համար, ովքեր մանրակրկիտ ու նորարարական ուսումնասիրություններ են ցանկանում իրականացնել թվարկվող ոլորտներից որևէ մեկում. օրենքի գերակայություն և արդարադատություն, տնտեսական ճգնաժամը և դրա հետևանքները Հայաստանում, եվրաինտեգրման գործընթացները Հայաստանի համատեքստում, ազատ մամուլ, զարգացման միտումները հանրային/սոցիալական ոլորտում, կրթական բարեփոխումներ:

ԲՀՀ-Հայաստանը նախատեսում է մինչև 4000 ԱՄՆ դոլար գումար կազմող դրամաշնորհներ տրամադրել կոնկրետ առաջարկներ պարունակող հանրային քաղաքականության փաստաթղթերի, հետազոտական զեկույցների, հանրային իրազեկման նորարարական նախագծերի, գրքերի համար:

Բացի այդ, ԲՀՀ-Հայաստանը նպատակ ունի խորացնել ընտրված հետազոտողների հմտությունները հետազոտական ուսումնասիրությունների ու հանրային քաղաքականության ձևավորման հարցերի շուրջ՝ կազմակերպելով մեթոդաբանական և այլ աշխատաժողովներ:

Նախքան հանրային քաղաքականության հետազոտությունների դրամաշնորհների նախաձեռնությունը մշակելը՝

2010թ. մայիսին ԲՀՀ-Հայաստանի հանրային քաղաքականության ու քաղաքացիական հասարակության հարցերով համակարգողները մասնակցեցին Բաց հասարակության ֆորումի կազմակերպած Քաղաքականության հետազոտությունների մեթոդաբանության մասին դասընթացին Ուլանբատորում (Մոնղոլիա): Հետազոտական մեթոդներին ծանոթացնելուց զատ՝ դասընթացը նաև ԲՀՀ-Հայաստանի անձնակազմին հնարավորություն տվեց մշակել ու իրականացնել Հանրային քաղաքականության հետազոտությունների դրամաշնորհների ծրագիրը Հայաստանում: ■

**ԲՀՀ-Հայաստանն աջակցում է ամառային ճամբարին՝ ազգային հանդուրժողականություն և երկխոսություն խթանելու նպատակով**

2010թ. օգոստոսին ԲՀՀ-Հայաստան հիմնադրամը «Հանդուրժողականության ձևավորում» ծրագրին հատկացրեց 1500 ԱՄՆ դոլար (ընդհանուր բյուջեն կազմում է 3451 ԱՄՆ դոլար) 5-օրյա բազմազգ երիտասարդական ամառային ճամբար անցկացնելու համար, որը միավորել էր Հայաստանի ազգային փոքրամասնությունների և էթնիկ հայերի 31 ներկայացուցիչների: Ծամբարն իրականացվեց 2010թ. օգոստոսի 19-ից 24-ը Լուսակերտում: Այն նվիրված էր օգոստոսի 12-ին նշվող Երիտասարդության միջազգային տարվան և նպատակ էր հետապնդում ամրապնդել հանդուրժողականությունը, խթանել երկխոսությունը և բարձրացնել քաղաքացիական ակտիվությունը Հայաստանի երիտասարդության շրջանում: 15-21 տարեկան պատանիները երիտասարդության միջազգային օրը միասին տոնելու ընթացքում շատ բան իմացան Հայաստանում բնակվող փոքրամասնությունների մասին, ինչպես նաև ծանոթացան ՄԱԿ-ի արժեքներին, միջազգային և տեղի փորձագետների հետ քննարկեցին մարդու իրավունքները, գենդերային և էկոլոգիական հարցեր:



Հանրային աշխատանք ազգային փոքրամասնությունների երիտասարդական ճամբարում, 10 օգոստոսի, 2010թ.

Միջոցառումը կազմակերպվել էր ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության (UNDPI) և Հայկական ՄԱԿ-ի միավորման (AUNA) կողմից համատեղ՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: «Հանդուրժողականության ձևավորում» ամառային ճամբարը 2010թ. զարմանք չէր ընդունում ՄԱԿ-ի կողմից իրականացված երկամսյա ծրագ-

րի շարքից էր՝ ուղղված կարողությունների զարգացմանն ու երիտասարդության առաջխաղացմանը՝ ուշադրության կենտրոնում պահելով Հայաստանի ազգային փոքրամասնությունները, որն աջակցում էր ՀՀ կառավարության աշ-



**Քննարկում էքնիկական հանդուրժողության և մարդու իրավունքների շուրջ, օգոստոս, 2010թ.**

խատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, Մպորտի և երիտասարդության նախարարությունը: ■

## **Բաց հասարակության հիմնադրամներ - Ռումինիան ավելի սերտ կապեր է ցանկանում ձևավորել Հայաստանի և Ռումինիայի քաղաքացիական հասարակությունների միջև**

Եվրաինտեգրումը խթանելիս և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, մասնակցային ժողովրդավարության համապատասխան չափանիշներն ու նորմերը հարգելիս՝ Բաց հասարակության հիմնադրամներն արժևորում են ԵՄ անդամ-պետությունների շարքը համարված երկրների անցած ուղին: Այս համատեքստում Բաց հասարակության հիմնադրամներ – Ռումինիայի գրասենյակը նախաձեռնեց իր խորհրդի նախագահ դոկտոր Իլոնա Միլայեսի, խորհրդի անդամ և ծրագրի համակարգող Մերգիու Պանայնտեի այցը Հայաստան՝ հանդիպելու Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ու ԲՀՀ-Հայաստան գրասենյակի գործընկերների հետ: Այցի նպատակն էր երկու երկրների քաղաքացիական հասարակությունների միջև համատեղ նախաձեռնությունների ստեղծումը՝ Ռումինիայի փորձից օգտվելու նպատակով: ■

## **«ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԶՆԵՆՈՒԹՅՈՒՆ**

### **«Շիրակ կենտրոն» ՀԿ-ն ներկայացնում է «2009-2010թթ. Գյումրիում սոցիալական բնակրաշխման մոնիտորինգի զեկույցը»**

2010թ. սեպտեմբերի 28-ին «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն ներկայացրեց աղետի գոտում սոցիալական բնակրաշխման գործընթացի մոնիտորինգի արդյունքները: Մոնիտորինգը ֆինանսավորել է ԲՀՀ-Հայաստանը: Ծրագրի նպատակն էր առավել թափանցիկ դարձնել գործընթացները և մեծացնել այդ գործընթացների հետ կապված հանրային իրազեկվածության ու հանրային վերահսկողության աստիճանը:

Մոնիտորինգի զեկույցում ներկայացվում է համադրական տվյալներ շահառուներին տրամադրված բնակարանների տիպերի վերաբերյալ, տեղեկություններ շահառուների բնակարան ստանալու իրավասության, կարգավիճակի և գործընթացին առնչվող այլ կարևոր գործոնների վերաբերյալ:

Կլոր սեղանի շուրջ քննարկման ընթացքում բարձրացվեցին հարցեր, որոնց թվում էր Գյումրու անօրևանների վերաբերյալ ճշգրիտ փաստաթղթային տվյալների բացակայությունը. շրջանառվող տվյալների միջև տարբերություն-

ները երբեմն գերազանցում են հազար հոգին: Դա ոչ միայն խոչընդոտում է գործընթացի թափանցիկությանն ու հաշվետվողականությանը, այլ նաև նորմալ բնակարան ստանալու հեռանկարների հետ կապված խնդիրներ է առաջացնում բնակարան ստանալու իրավասություն ունեցող բազմաթիվ մարդկանց համար: Փաստացի դիտարկումներից զատ, զեկույցը նաև ներկայացնում է առաջարկներ բնակարանների բաշխման մոտեցումների վերաբերյալ, որոնք կարող են մեծացնել գործընթացի արդյունավետությունն ու վստահությունը դրա հանդեպ:

Քննարկմանը մասնակցում էին ազգային և միջազգային կազմակերպություններ, ՁԼՄ-ներ, կառավարության ներկայացուցիչներ: Ներկա էր Քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը, ով նշեց բնակարանների բաշխման գործընթացին հետևելու համար ստեղծված հանձնաժողովի մասին, դրա աշխատանքի մասին և նկատեց, որ քաղաքացիներից շատ բողոքներ չեն ստացվել: Մոնիտորինգի զեկույցի ամբողջական տեքստը զետեղված է [www.partnership.am](http://www.partnership.am) կայքում: ■

## **ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ**

### **Ա1+-ը սկսում է առցանց հեռարձակում**

2010թ. սեպտեմբերին ԲՀՀ-Հայաստանը օժանդակեց Ա1+-ին ինտերնետային հեռարձակում սկսելու հարցում: Այբ-Ֆե լրատվական հաղորդումը 13:45-ից մինչև 21:00 կարելի է ժամը մեկ առցանց դիտել: Նաև «Հետգրություն» ամենօրյա ծրագիրը, որի ընթացքում Արամ Աբրահամյանը հյուրընկալում է հասարակական, քաղաքական և մշակութային գործիչների, հեռարձակվում է երկուշաբթիից

ուրբաթ՝ երեկոյան ժամը 19:10-ին: Ինտերնետային հեռարձակումը կարող է ապահովել այն բազմակարծությունը, որը Հայաստանում վերացել էր այն օրվանից, երբ եթերից դուրս մղվեց միակ ընդդիմադիր հեռուստաալիքը:



## ԲՀՀ - Հայաստանն աջակցում է հինգ առցանց լրատվամիջոցների

2010թ. ԲՀՀ-Հայաստանն աջակցություն տրամադրեց հինգ առցանց լրատվական կազմակերպությունների, որոնց ընտրությունը կատարվել է մրցութային խիստ պահանջների համաձայն: Այդ կազմակերպությունները՝ Մելտեքս ԲԲԸ ([www.a1plus.am](http://www.a1plus.am)), ԱՀՏԿ Համակարգ ([www.lragir.am](http://www.lragir.am)), Էկոլուր ՀԿ ([www.ecolor.org](http://www.ecolor.org)), «Լրագրողներ հանուն

ապագայի» ՀԿ ([www.JNews.am](http://www.JNews.am)) և «Ամբրելա» միջազգային լրագրողների ցանց ՀԿ ([www.medialab.am](http://www.medialab.am)), կօգտագործեն միջոցներն իրենց կայքերում առավել անկողմնակալ տեղեկատվություն ապահովելու համար՝ փորձելով լրացնել անաչառ լրատվության ու վերլուծության պակասը: ■

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ռազմավարական դատավարության ծրագիրն օժանդակում է ինը գործի հարցում

2010թ. հունիս-սեպտեմբեր ժամանակահատվածում Ռազմավարական դատավարության ծրագիրն աջակցել է ինը գործի հարցում: Այդ գործերը կապված էին սեփականության իրավունքի, կառավարման թափանցիկության ու հաշվետվողականության, տեղեկատվության ազատության, արդար դատավարության, բարոյական փոխհատուցման

ու բնապահպանական հարցերի հետ: Գործերից երեքը, որոնք վերաբերում էին օրենսդրության սահմանադրականությանը, գտնվում են Սահմանադրական դատարանում, մի գործ հասել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան, իսկ մյուսները գտնվում են Հայաստանի տարբերատյանների դատարաններում: ■

## ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

### Ներկայացվել է «Մարդու իրավունքները և պացիենտի բուժօգնությունը Հայաստանում. գործնական ուղեցույց»-ը

«Մարդու իրավունքները և պացիենտի բուժօգնությունը Հայաստանում. գործնական ուղեցույց»-ը ներկայացվեց 2010թ. օգոստոսի 8-12-ը Չագրեբում (Խորվաթիա) կայացած Առողջապահական իրավունքի 18-րդ միջազգային համագումարում: Համագումարը, որին մասնակցում էին փորձագետներ աշխարհի տարբեր ծայրերից, հիանալի վայր էր ուղեցույցը ներկայացնելու համար, ինչպես նաև մտքեր փոխանակելու այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսին են. մարդու իրավունքների վրա հիմնված պացիենտների իրավունքները, առողջապահական օրենքներն ու հաստատությունները, բուժժառայություններում տեղ գտած բացթողումները, բժիշկների ու բուժհաստատությունների պարտավորությունները, էվթանազիայի հետ կապված խնդիրները, բիոէթիկան, իրագրելի համաձայնությունը ու այլն: Հայկական պատվիրակության կազմում էին ԲՀՀ-

Հայաստանի «Իրավունք» և «Հանրային առողջապահություն» ծրագրերի համակարգողները, ինչպես նաև «Հակաթմրամուլային քաղաքացիական դաշինք» ՀԿ-ի ներկայացուցիչները: «Այս միջոցառումը բացառիկ հնարավորություն էր այլ երկրների ու մայրցամաքների հետ դաշինքներ ձևավորելու և ներկայացնելու այն ռեսուրսները, որ մշակվել են Հայաստանում բժիշկների ու իրավաբանների համար՝ պացիենտների իրավունքների ոլորտում տեղ գտած չարաշահումները վերացնելու նպատակով», ասաց Մարդու իրավունքները և պացիենտների խնամքը ծրագրի իրավագետ-գիտաշխատող Վիոլետա Չոպունյանը:

«Մարդու իրավունքները և պացիենտի խնամքը Հայաստանում. գործնական ուղեցույց»-ը, որի ձևավորման աշխատանքները ֆինանսավորել է ԲՀՀ-Հայաստանը և Իրավունք և առողջապահություն նախաձեռնությունը, Հայաստանում իրավունքի և առողջապահության դաշտում ձևավորված առաջին աղբյուրն է, որը ընդգծում է պացիենտների իրավունքների հետ կապված դրությունը Հայաստանում և ծառայում որպես ուսումնական ձեռնարկ իրավական ու առողջապահական ոլորտի մասնագետների համար: ■

### Պացիենտների իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթաց՝ մարդու իրավունքների հարցերով զբաղվող իրավաբանների համար

2010թ. հուլիսի 8-10-ը ԲՀՀ-Հայաստանը մարդու իրավունքների հարցերով զբաղվող իրավաբանների համար կազմակերպեց պացիենտների իրավունքների պաշտպանության վերաբերյալ եռօրյա դասընթաց: Դասընթացի շրջանակում առանձնակի ուշադրություն դարձվեց ներպետական վարույթներում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում և ՄԱԿ-ի պայմանագրերի կատարման նպա-



Հայաստանի պատվիրակությունը Առողջապահական իրավունքի 18-րդ համագումարում, Չագրեբ, Խորվաթիա, օգոստոս, 2010թ.

տակով ստեղծված մարմիններում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և ՄԱԿ-ի կոնվենցիաների կիրառությանը: Վերապատրաստման դասընթացը ֆինանսավորում էին ԲՀՀ-Հայաստանը, Մարդու իրավունքների կառավարման դրամաշնորհների ծրագիրը (ԲՀՀ Բուդապեշտ), Իրավունք և առողջապահություն նախաձեռնությունը (ԲՀՀ Հանրային առողջապահության ծրագիր, Նյու-Յորք) և Նորվեգիայի թագավորության արտաքին գործերի նախարարությունը:

Վերապատրաստման դասընթացի ժամանակ շեշտադրվեց Եվրոպական դատարանի և ՄԱԿ-ի կոնվենցիաների կատարման նպատակով ստեղծված մարմինների նախադեպային իրավունքի նորմերի կիրառությունն առօրյա

իրավական պրակտիկայում: Դասընթացն անդրադարձավ ԲՀՀ-Հայաստանի պացիենտների իրավունքների ուղեցույցին, որում մանրամասնեցված են ներպետական, տարածաշրջանային և միջազգային համապատասխան չափանիշները և դրանց կիրառությունը պացիենտների իրավունքների երաշխավորման նպատակով: Այդ առումով դասընթացը նպատակ ուներ լիարժեքորեն ներկայացնել պացիենտների խնամքի գործընթացում մարդու առանձին իրավունքները, որոնք կարող են դրսևորվել թե՛ քաղաքացիական և քաղաքական, թե՛ տնտեսական և սոցիալական իրավունքների տեսքով: ■

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

### Ներկայացված է երեխաների պաշտպանության իրավիճակի վերլուծությունը երեք մարզերում

«Փրկեք երեխաներին» հայաստանյան գրասենյակը ուրբաթ օրը՝ սեպտեմբերի 10-ին շահագրգիռ կողմերի համար ներկայացրել է երեխաների պաշտպանության իրավիճակի վերլուծության արդյունքները Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերի համար: Իրավիճակի վերլուծությունն իրականացվել է որպես եռամյա ծրագրի մաս, որը համաֆինանսավորվել է ԲՀՀ-Հայաստան գրասենյակի և Եվրամիության կողմից:

«Համախմբվենք հանուն երեխաների և փրկենք ապագան» անվամբ ծրագրի նպատակն էր ուսումնասիրել տարբեր հաստատություններում երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունների աստիճանն ու ծավալը և պարզել, թե ինչ հնարավորություններ կան այդ հիմնահարցերը լուծելու համար:

Ծրագրային թիմը հարցազրույց է ունեցել երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տարբեր հաստատությունների 59 մասնագետների հետ և հանդիպումներ է ունեցել 21 թիրախային խմբերում՝ տվյալներ հավաքագրելու նպատակով, որի արդյունքում եկել է այն եզրակացության, որ բռնության ամենատարածված եղանակները ֆիզիկական և հոգեբանական շահագործումն է ու անտարբերությունը՝ հիմնականում աղքատության, դժբախտ ընտանիքների, ծնողական հմտությունների բացակայության, ինչպես նաև ընտանիքում ալկոհոլի ու թմրանյութերի չարաշահման պատճառով:

Ծրագիրը նախատեսում է ստեղծել երեխաների պաշտպանության ուղեգրման համակարգեր, որը կօգնի բացահայտել ու լուծել երեխաների նկատմամբ բռնության դեպքերը: ■

### Հայ գիտնականները հետազոտություն են անցկացնում Քեմբրիջում

Երկու հայ գիտնական՝ Հովհաննես Հովհաննիսյանը և Աննա Ասատրյանը, ընտրվել էին Քեմբրիջի համալսարանում 2010թ. հուլիս ամսին մեկամսյա հետազոտական ծրագրի մասնակցելու համար: Հ. Հովհաննիսյանը (Երևանի պետական համալսարան, կրոնագիտություն) և Ա. Ասատրյանը (Երևանի պետական համալսարան, պինդ մարմնի ֆիզիկա) մեկ ամիս անցկացրեցին Միացյալ Թագավորությունում՝

Քեմբրիջի քոլեջների հյուրընկալության ծրագրի շրջանակում: Հովհաննեսը տեղավորվել էր Ջիզբս քոլեջում և նրա հետազոտության ոլորտը կրոնի ֆենոմենոլոգիան էր: Աննան իր հետազոտությունն իրականացրեց պինդ մարմնի ֆիզիկայի ոլորտում՝ Քլեյր քոլեջում:



Աննա Ասատրյանն ու Հովհաննես Հովհաննիսյանը (աջից) Քեմբրիջում, հուլիս 2010թ.

«Մասնակցությունը ծրագրին ինձ թույլ տվեց վերանայել Երևանի պետական համալսարանում իմ դասավանդած առարկան՝ համապատասխանեցնելով կրթական միջազգային չափորոշիչներին, ինչը ես հատկապես օգտակար եմ համարում», - նշել է Աննան: «Ծրագիրը հնարավորություն էր Քեմբրիջի գործընկերներին հանդիպելու, փորձի փոխանակման և Քեմբրիջի կրթական հանրության հետ նոր կապեր հաստատելու համար», - ասում է Հովհաննեսը:

Քեմբրիջի քոլեջների հյուրընկալության ծրագիրը, որ իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամների հետ համատեղ, հնարավորություն է տալիս Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու նախկին Խորհրդային Միության գիտնական աստիճան ունեցող անձանց աշխատել համալսարանի գրադարաններում կամ կապ հաստատել իրենց ոլորտի գիտնականների հետ: Ծրագիրը Հայաստանում մեկնարկեց 2001թ., և մինչ օրս ծրագրին մասնակցել է 12 գիտնական: ■

## «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում» մեթոդական ուղեցույցը ներկայացնում է «Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը

2010թ. սեպտեմբերի 17-ին «Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը ներկայացրեց «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում» մեթոդական ուղեցույցը: Ընդհանրապես մասնակցում էին Հայաստանի բոլոր բուհերի, միջազգային կազմակերպությունների և կրթության հարցերում ներգրավված դոկտոր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ուղեցույցը, որ 2010թ. ապրիլին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատվել էր որպես կողմնո-

րոշիչ գիրք, մշակվել է «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված բարձրագույն կրթության բազմամակարդակ ուսումնական ծրագրերի կառուցման մեթոդաբանության մշակում» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվել է 2009թ. «Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից և ֆինանսավորվել է ԲՀՀ-Հայաստան կազմակերպության կողմից: Ուղեցույցի հրատարակմանը աջակցել է Տեմպուս ծրագրի հայաստանյան գրասենյակը:

Ուղեցույցը նկարագրում է ունակությունների, կարողությունների վրա հիմնված ուսումնական ծրագրերի մշակման մեթոդաբանությունն ու մոտեցումները: Օրինակները բերված են տեսական ֆիզիկայի ծրագիրը կազմելու, վերանայելու և հաստատելու վերաբերյալ: Ուղեցույցը տեղադրված է [www.osi.am/links.asp](http://www.osi.am/links.asp) կայքում: ■

## ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

### Թումանյանի հեքիաթի օրը Դսեղ էր բերել 200 երեխա

Հինգերորդ միջազգային տիկնիկային փառատոնը «Թումանյանի հեքիաթի օր» խորագրով բացվեց Լոռու մարզի Դսեղ գյուղում 2010թ. սեպտեմբերի 5-ին: Փառատոնին մասնակցում էին տիկնիկային թատրոններ 10 երկրներից՝ Դանիայից, Բելգիայից, Բելառուսից, Չեխիայից, Վրաստանից, Սլովենիայից, Շվեյցարիայից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Հունգարիայից և, իհարկե, ամբողջ Հայաստանից:



Հեքիաթների հերոսները տոնի ժամանակ, 5 սեպտեմբերի, 2010թ.

Ավելի, քան 5000 երեխաներ շրջակա գյուղերից, Վանաձորից, Երևանից և Հայաստանի այլ քաղաքներից, այդ թվում՝ «Օրբան» ցերեկային խնամքի կենտրոնի մոտ 50 երեխաներ, եկել էին Դսեղ՝ մասնակցելու փառատոնին: Տարբեր տարիքի երեխաները և նրանց ծնողները հիացած էին միջոցառմամբ և անակնկալների առատությամբ: Մեծ անակնկալ էր Շվեյցարիայի տիկնիկային թատրոնի կողմից բերված օղապարիկը: ■

### «Սև կյանք» լուսանկարների ցուցահանդես

«Սև կյանք» լուսանկարների ցուցահանդեսը տեղի ունեցավ 2010թ. սեպտեմբերի 16-ին Երևանի Արվեստի պատկերասրահում: «Սև կյանք» ծրագիրը Հայաստանում հանրահայտ ֆոտոլրագրող Ռուբեն Մանգասարյանի (1963-2009թթ.) ամենախոշոր և ամենատպալվորիչ ֆոտոծրագրերից էր: Նա «Պատկեր» ֆոտոգործակալության հիմնադիրն էր և Հայաստանում «Նեյշնլ Ջեոգրաֆիկ» Թրավելերի խմբագիրը: Ռուբեն Մանգասարյանի մահից հետո դա առաջին ցուցահանդեսն էր Երևանում: Ցուցահանդեսին աջակցում էին Բաց հասարակության հիմնադրամաների «Արվեստ և մշակույթ» ծրագիրը: Ցուցահանդես այցելեցին նկարիչներ, ՋԼՄ-ների, քաղաքացիական հասարակության, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների և առաքելությունների ներկայացուցիչներ:

Ծրագիրը պատկերում է Լեռնային Ղարաբաղի պատերազմից մազապուրծ եղած և Բազրատաշեն գյուղում հաստատված հայ ընտանիքի «սև կյանքը»:

«Սև կյանք» ծրագիրը մի քանի մրցանակ է շահել և հրապարակվել է *Days of Japan* ամսագրում ու *BBC Online*-ում 2003-2009թթ.: Ֆրանսիայի և Շվեյցարիայի որոշ պատկերասրահներ ցանկություն են արտահայտել լուսանկարները ցուցադրելու նաև իրենց երկրներում: ■

**Ամառային չորս ճամբար՝ կարիքավոր երեխաների համար հոգատար միջավայր ապահովելու նպատակով**

Լսողության խանգարումներ ունեցող երեխաների Երևանի կրթահամալիրը և Բժշկա-հոգեբանական մանկավարժական գնահատման կենտրոնը Հանրավանում և Ստեփանավանում կազմակերպեցին երկուսից երեք շաբաթ տևողությամբ ամառային հանգիստ հատուկ կրթական կարիքներ ունեցող 6-13 տարեկան 120 երեխաների համար:



Արմավիրի թեմի ամառային ճամբարի երեխաները, 14 հուլիսի, 2010թ.

ԲՀՀ-Հայաստանի կողմից Լսողության խանգարումներ ունեցող երեխաների Երևանի կրթահամալիրին ցուցաբերվել է 25000 ԱՄՆ դոլարի աջակցություն (10716 ԱՄՆ դոլար ներդրվել է կրթահամալիրի կողմից), իսկ Բժշկա-հոգեբանական մանկավարժական գնահատման

կենտրոնին՝ 21472 ԱՄՆ դոլարի աջակցություն (11299 ԱՄՆ դոլար ապահովվել է կենտրոնի կողմից որպես ներդրում):

Հայ առաքելական եկեղեցու Արմավիրի թեմի կողմից Հանրավանում կազմակերպվել է ամառային հանգիստ Արմավիրի մարզի կարիքավոր ընտանիքների ծնողազուրկ 130 երեխաների համար: Այս ծրագրի դրամաշնորհային արժեքը կազմում է 25000 ԱՄՆ դոլար և 8550 ԱՄՆ դոլար՝ ներդրում թեմի կողմից:

ԲՀՀ-Հայաստանն աջակցեց «Անարատ Հղության Հայ Քույրերի Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստան» կազմակերպությանը՝ տրամադրելով 66,824 ԱՄՆ դոլար, որպեսզի ջեռուցման համակարգ անցկացվի Տիրամայր Հայաստանի ճամբարում ևս 66,824 ԱՄՆ դոլարի համաֆինանսավորում կտրամադրվի ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից: Տիրամայր Հայաստանի 2010թ. ճամբարը նախատեսված է Հայաստանի և Հարավային Վրաստանի 8-14 տարեկան 850 կարիքավոր տղաների և աղջիկների համար:

Ամառային ճամբարները երեխաների համար ջերմ և հոգատար միջավայր ապահովեցին, ամրապնդեցին նրանց հոգևոր, ֆիզիկական և զգայական վիճակը, նվազեցրեցին աղքատության և լքվածության անմիջական ու երկարատև ազդեցությունը նրանց կյանքում, իսկ հատուկ դպրոցների դեպքում՝ դրանք նաև մասնագիտական աջակցություն ցուցաբերեցին դպրոցում իրենց հասակակիցների հետ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների սոցիալական ինտեգրումը խթանելու համար: ■

**Աջակցություն «Աշտարակ» ֆերմերային խմբին՝ փրկելու նորարարական գյուղատնտեսությունը**

Հայաստանի տարբեր մարզերի ֆերմերները, որոնք համագործակցում են բանջարեղենի հազվագյուտ տեսակներով (արտիշոկ, կոհլրաբի, ֆիզալիս, բրոկոլի և այլն)

այլընտրանքային և նորարարական գյուղատնտեսական ապրանքներ ստեղծելու հարցում, լուրջ ֆինանսական կարիքների առաջ կանգնեցին տնտեսական ճգնաժամի պատճառով և գտնվում էին ինչպես բերքը, այնպես էլ վերջին տարիների ընթացքում կատարած իրենց բոլոր ներդրումները կորցնելու եզրին: Փրկելու համար գյուղատնտեսական յուրահատուկ արտադրանքը, որ զարգացել և հանրապետության ավելի մեծ թվով շրջաններ էր ներառել վերջին տարիների ընթացքում, Համաճգնաժամային հիմնադրամը ֆինանսավորեց 5000 ԱՄՆ դոլարի մի ծրագիր, որի շրջանակում 2100 ԱՄՆ դոլար ներդրվեց խմբի կողմից կանխիկ հատկացման ձևով, որպեսզի օգնի գյուղատնտեսներին փրկել արժեքավոր բանջարեղենատեսակների բերքը և հետագա զարգացման հնարավորություն տա: Ծրագիրը իրականացվում է Աշտարակում և հարևան գյուղերում: ■

**Հակաճգնաժամային հիմնադրամի շնորհիվ «Խնամք» ՀԿ-ն կարողանում է ապահովել ցերեկային կենտրոնի գործունեությունը՝ հոգեբուժական խնդիրներ ունեցող անձանց համար**

«Խնամք» ՀԿ-ն, որը խթանում է հոգեկան խանգարումներ ունեցող անձանց վերաինտեգրումը հասարակություն, աջակցություն ստացավ Հակաճգնաժամային հիմնադրամից, որպեսզի շտապարեցնի իր գործունեությունը՝ ուղղված երկարատև հոգեբուժական խնդիրներ ունեցող անձանց՝ փորձառու աշխատակիցների կողմից աջակցության ապահովմանը Երևանի ցերեկային աջակցման կենտրոնում և Աշտարակում՝ ծրագրի համար գնված տանը: Ինչպես ցերեկային կենտրոնը, այնպես էլ տունը ունենան հազվագյուտ պայմաններ և հազվեցվածություն՝ հոգեբուժական խնդիրներ ունեցող անձանց սպասարկելու և նրանց սոցիալական վերականգնումն ու հասարակության հետ վերաինտեգրումը խթանելու համար: Յուրաքանչյուրի համար գործում է վերականգնման անհատական ծրագիր:



Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային կենտրոնը

Ծրագիրը թույլ կտա հոգեբուժական խնդիրներ ունեցող ավելի, քան 60 անձանց օգտվել աջակցման կենտրոնի ծառայություններից և ինտեգրվել հասարակություն, ինչպես նաև ստանալ աջակցություն հաստատության համար համայնքում: Հակաճգնաժամային հիմնադրամի 25000 ԱՄՆ դոլարի և 6000 ԱՄՆ դոլար սեփական ներդրման շնորհիվ, «Խնամք» ՀԿ-ն չի դադարեցնի իր ծրագիրը և հնարավորություն կունենա ստանալ պետական աջակցություն հետագա աշխատանքի համար՝ ավելացնելով շահառուների թիվը: ■

**2011-12 ուս. տարվա կրթաթոշակներ Էսսեքսի համալսարանում**

Բաց հասարակության հիմնադրամները և Էսսեքսի համալսարանը ընդունում են դիմումներ ՀՀ քաղաքացիներից 2011-2012 ուսումնական տարվա OSF/UNIVERSITY OF ESSEX կրթաթոշակի համար: Կրթաթոշակը շնորհվում է Մարդու իրավունքների կենտրոնում մեկամյա մագիստրական ծրագրում ուսանելու համար: Կրթաթոշակն ապահովում է մեկ անհատի ուսման վարձը, ճանապարհածախսը և կեցության վարձը: Ուսումնական տարեկանը հետո ուսանողները պետք է վերադառնան Հայաստան իրենց աշխատանքը կամ ուսումը շարունակելու պայմանով:

Դիմողները պետք է լինեն ՀՀ քաղաքացի և բնակվեն Հայաստանում, ունենան բարձրագույն կրթություն և գերազանց ակադեմիական որակավորում, լավ տիրապետեն անգլերեն լեզվին (մին. IELTS – 7.0) և ունենան աշխատանքային փորձ մարդու իրավունքների բնագավառում:

Դիմումի ձևի և լրացուցիչ տեղեկությունների համար այցելել <http://www.osi.am> կամ դիմել Աննա Գևորգյանին ԲՀՀ հայաստանյան գրասենյակի հետևյալ հասցեով. Երևան, Թումանյան փ. 2-րդ փակուղի, տուն 7/1. Հեռ. 533862, 536758, email` [anna@osi.am](mailto:anna@osi.am):

Դիմումների համաձայն վերջնաժամկետն է 2011թ. հունվարի 17-ը, ժամը 17:00:

**Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը սկսում է «Բանավեճ - Հայաստան» ծրագիրը**

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը և Բաց հասարակության հիմնադրամներ երիտասարդական մախաճեռնությունը հայտարարում են «Բանավեճ - Հայաստան» ծրագրի մեկնարկը: Ծրագրի նպատակն է երիտասարդներին ներգրավել լավ հիմնավորված և կշռադատված բանավեճի մեջ այնպիսի հարցերի շուրջ, որոնք կարևոր են իրենց կյանքի և հասարակության համար: «Հայկական բանավեճ» ծրագիրը նպատակ է հետապնդում խթանել բանավեճի կիրառման պրակտիկան դպրոցներում, երիտասարդական ակումբներում, երիտասարդների հետ աշխատող ՀԿ-ներում կամ համայնքային կենտրոններում՝ որպես երիտասարդների համար տարածք բանավեճեր անցկացնելու նպատակով: Բանավեճը սովորելու ճկուն միջոց է, որը կարելի է կիրառել դասարաններում, արտադասարանական գործունեության ժամերին, մրցույթների և մրցաշարերի ժամանակ, ինչը կարող է խթանել և առաջ բերել քննարկումներ կարևոր հարցերի շուրջ՝

հասարակության ավելի լայն շերտերի ներգրավմամբ: Որպես «Բանավեճ - Հայաստան» ծրագրի մաս Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը, Բաց հասարակության երիտասարդական մախաճեռնությունը և Բանավեճի ուսուցման միջազգային ասոցիացիան (IDEA) հրավիրում են մասնակցել նոր տիպի բանավեճի վերաբերյալ ներառական վերապատրաստմանը, որը տեղի կունենա ս.թ. դեկտեմբերի 1-3-ը Երևանում, Ռեժիմե հյուրանոցում (Նորքի այգիներ փ., տուն 235/1):

Մենք հրավիրում ենք երիտասարդների հետ աշխատող անձանց, երիտասարդ առաջնորդների, ուսուցիչների, հասարակական կազմակերպությունների աշխատակիցների, երիտասարդների հետ աշխատանքով հետաքրքրված ուսանողների մասնակցել ուսուցմանը: Ուսուցումը կտևի երեք օր և բաղկացած կլինի պրեզենտացիաներից, ամփոփ տեղեկություններից, ուսուցողական վարժանքներից, դերախաղերից:

Ուսուցումը կիրականացվի հրավիրված մասնագետների կողմից, ռուսերեն լեզվով՝ անդրադառնալով բանավեճի հետևյալ տարրերին.

- Ի՞նչ է բանավեճը, ի՞նչ է փաստարկների բերումը
- Բանավեճի տարբեր ֆորմատներ
- Ինչպե՞ս ներգրավել տարբեր երիտասարդների՝ անցկացնել բանավեճ և քննարկում
- Ինչպե՞ս կիրառել բանավեճի տեխնիկաները հասարակական բանավեճերի ժամանակ
- Ինչպե՞ս կազմակերպել բանավեճեր Հայաստանի հասարակությանը հետաքրքրող հարցերի շուրջ:

Ուսուցման պարտադիր պայմանն է մասնակցել վերապատրաստմանը բոլոր երեք օրերին: Հետաքրքրված անձիք պետք է ներկայացնեն համառոտ ինքնակենսագրություն /ռեզյումե/ և հետաքրքրվածության նամակ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով (նամակը պետք է 500-700 բառի սահմաններում ներառի տեղեկություններ Ձեր ունեցած փորձի, ներկա գործունեության, հետագա ծրագրերի, ինչպես նաև Ձեր տեսլականը այն մասին, թե ինչպես եք պատրաստվում կիրառել վերապատրաստումից քաղված գիտելիքները): Վերոհիշյալը հարկավոր է ներկայացնել ԲՀՀ-Հայաստանի գրասենյակ մինչև ժ. 17.00, ս.թ. նոյեմբերի 12-ը հետևյալ հասցեով՝ Երևան, Թումանյան փողոց 2-րդ փակուղի, տուն 7/1, ինչպես նաև ուղարկելով [register@osi.am](mailto:register@osi.am) էլ փոստի հասցեին: Նախապատվությունը կտրվի այն դիմորդներին, որոնք կառաջարկեն հստակ մեխանիզմներ ստացած գիտելիքների ու հմտությունների հետագա կիրառելիությունն ապահովելու համար:

Հարցերի և հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք մեզ 53 38 62, 53 67 58 հեռախոսահամարներով կամ գրեք [lusine@osi.am](mailto:lusine@osi.am) հասցեին:

Հասցե՝ Թումանյան փ. 2-րդ փակուղի, տուն 7/1  
Երևան 0002, Հայաստան  
Հեռ./Ֆաքս՝ +37410 533862; 536758  
Էլ. փոստ՝ [info@osi.am](mailto:info@osi.am)  
Վեբ կայք՝ [www.osi.am](http://www.osi.am), [www.partnership.am](http://www.partnership.am)